



Ն. ՏՈՎԱՐՄՍԿԻ

ԱՆԻԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Հեռավոր անցյալում հարուստ կերպով կառուցապատված և բազմահազար քնակչություն ունեցող Անին այժմ ներկայացնում է ամայի և անմարդաբնակ ավերակներ՝ փովլած Ախուրյան գետի աջափնյա սարահարթի վրա, Լենինականից 35—40 կմ հեռավորությամբ դեպի հարավ:

Քաղաքատեղը զբաղեցնում է մի հրվանդան, որը գտնվում է Ախուրյանի և նրա աջ վտակը հանդիսացնող ու Ծաղկունյաց ձորով (Ծաղկոցանորով) հոսող Անիի գետակի միախառնման մոտ: Կողքի երկու ձորակները՝ Գայլիձորը և Խգիձորը, որոնք համապատասխանաբար դուրս են գալիս դեպի Ախուրյանի կիրճը և Ծաղկոցանորը, հրվանդանում կտրում-առանձնացնում են մի եռանկյունաձև տարածություն, որի վրա սփովլած են ժամանակի ու մարդկանց «ջանքերով» կիսավեր դարձած ամրություններ և առանձին շենքեր՝ գլխավորապես եկեղեցական:

Հիշատակված ավերակների հետ միասին ուշադրություն են գրավում արհեստական այրերը՝ փովլած քաղաքատարածությունը սահմանափակող կիրճների զառիթափ ափերին: Անին հիշյալ կիրճերով երկու կողմից քնականորեն պաշտպանված էր և միայն երրորդ՝ հյուսիսային ծալքամատում կարիք

ուներ համատարած պաշտպանական կառուցվածքների: Քաղաքի նկատմամբ հարավային կողմից իշխում է մի բլոր, որի գագաթին էր գտնվում երբեմնի միջնաբերդը: Նրա կազմի մեջ էր մտնում Կանարականների ամրոցը: Այստեղ պեղումների ժամանակ բացվել են տասներորդ և հաջորդ դարերի պալատական համալիրի մնացորդները:

Անիի առաջին քաղաքապարհասպեսը, որոնք պաշտպանության տակ էին վերցնում միջնաբերդից դեպի հյուսիս ընկած հյուրվանդանի նեղ մասը, կառուցվել են 964 թ. Աշուա Գ թագավորի ժամանակ: Սակայն քաղաքը արագորեն աճում էր՝ 25 տարի անց զբաղեցնելով հրվանդանի այն ամբողջ հողատարածությունը, որն ընկած էր Գայլիձորի և Խգիձորի միջև: Ուստի Աշուա Պրդի Սմբատ Բ-ը ստիպված եղավ կառուցել տալու քաղաքապարհասպեսի երկրորդ գիծը (բազմաթիվ բուրգերով, քաղաքառարապաններով ու դոներով), որը հետագայում մի շարք անգամներ լրացվել և ամրացվել է: Հիշյալ պարհասպեսից դուրս, սարահարթի վրա, տարածվում էին ընդարձակ արվարձանները:

Քաղաքի քնակչության այսպիսի արագ աճը չէր կարող տեղի ունենալ միայն ի

հաշիվ թագավորական տաճը մոտ կանգնած ֆեռդալական ավագանու, որն այսուղ գտնում էր իր գործունեության համար նպատակով պայմաններ: Չտեսնակած թափով ծավալված քաղաքացիական և եկեղեցական շենքերի շինարարությունը անեցնում էր Անիի բնակչությունը հազարավոր աշխատավորներով և նրանց սպասարկող արհեստավորներով ու մանր առևտորականներով: Անա այդ հողազորկ, միջոցներից սակաւ մարդիկ, չունենալով քաղաքում տեղ կառուցելու հնարավորություն, հավանաբար սկսեցին 10-րդ դարում մասսայաբար բնակվել ստորգետնյա բնակարաններում Անիի կիրճերի ժայռոտ ափերին: Մեր ենթադրությունը հշտվում է նրանով, որ դետանիքը ներքում հնաշող մեծամասնությունը բավարարվել է այսուղ միասենյակ բնակարանով: 1915 թ. Դ. Ղիշշիձեի և 1916 թ. հոդվածին հետինակի կողմից ուսումնասիրված 823 բնակելի այրերից 693-ը միասենյակ էին:

Անիի սարահարթի կտրվածքը բաղկացած է ժայռային երեք շերտերից՝ երկու ամուր (ներքին և վերևի շերտերը) և մեկ փոխը (միջին շերտը) կազմված հրաբխային տուֆից: Անա վերջինն էլ, շնորհիվ իր «մատչելիության», նախահիրեցին անցեցիները: Տոփի քառասուն մետրանոց շերտը հնարավորություն տվեց այրերը տեղավորել մի քանի հրակաշարքերով, որոնց թիվը առանձին հատվածներում հասնում է հինգի, գոյցե և վեցի: Ներկայունս տեսանելի են գլխավորապես վերին հրակաշարքերը, որովհետո այրերի մոտ տուֆերը առանձնապես ուժեղ հողմնահարվել ու քայլավել են, փուլքերի տակ ծածկելով երբին հրակաշարքերը:

Չորերում ստորգետնյա քաղաքի հարկաշարքերը տեղավորված են տարբեր ձեւվով, կապված ձորերի ափերի բնույթից: Մեկում, ինչպես օրինակ Սյուրյանի քաղաքին ափում, նրանք ձգված են անընդմեջ շարքով, ինկ որիշներում կազմում են խմբեր: Սուանձնապես խիս բնակեցված Ծաղկոցանորում, ուր հանդիպական ափերը հրը-

¹ Դ. Ա. Կոստածե, Պատրիա Անի (Материалы XIV Анийской археологической комиссии 1915 года. Обработка материалов, чертежи, предисловия и комментарии Н. М. Токарского), Ереван, 1972. Այս թվերը թույլ են տալիս գաղափար կազմելու Անիի այրաբնակների բնակի մասին: Ենթադրելով, որ հողով լցված բնակարանների թիվը մոտավորապես հոյն չափ է, ու յորպահանջոր ընտանիքի կազմը կարող էր քաղաքաց լինել 4—5 հոգուց, ապա կատավի, որ այրաբնակ անցյների թիվը կազմում էր շուրջ յոթ հազար:

վանդանածն դորս շեշտված տուֆային ժայռեր են, առանձին ձորակներով բաժանված միմյանցից, ժայռափոր բնակարանները կազմավորվում են յորորինակ «քաղաքամասեր»: Դրանցից յորպահանջորդում, բացառությամբ տասնչորսից երկուսի, կային առնվազն մեկական եկեղեցի: Զգալի երկարության և բնակչության մեծ թվի դեպքում «թաղամասերը» ունեին մի քանի եկեղեցներ, ըստ ծների թվի, քանի որ ժայռափոր եկեղեցների մասնակի առաջնական հարմարակների բացակայությունը հնարավորություն չէր տալիս մեծարկի հավատացյալների կուտակման: Ծաղկոցանորում հետազոտված 422 ժայռափոր բնակարանների միջն կային 19 ժայռափոր ծխային եկեղեցներ, բացի տնային, վանքային և դամբարաններին կից չորս եկեղեցներից:

Այլ էր դրությունը ստորգետնյա քաղաքի Սյուրյանի մասում: Այստեղ «թաղամասերը» բաժանված չեն ըստ բնական պայմանների: Հայային ևսն եկեղեցները: Հավանաբար այստեղի այրաբնակները օգտվում են քաղաքի վերգետնյա եկեղեցներից: Դա միանգամայն հնարավոր էր, քանի որ հիշատակված այրերը ընդգրկված էին մայրաքաղաքի պաշտպանական պատերով, ու այդ պատճառով բնակիչները կարող էին մուտք ունենալ քաղաք: Նոյնը չի կարելի ասել Ծաղկոցանորի և Անիի մյուս ձորերի (քաղաքապարհների ասթմաններից դուրս գտնվող) այրաբնակների մասին, որոնք տարբեր առիթներով կարող էին կտրվել քաղաքի ու այստեղ գտնվող եկեղեցներից: Ուստի կարելի է ենթադրել, որ իգիձորը և Գայլիձորը ունեին երկու ինքնուրուսն ծխեր ու իրենց ժայռու ափերից փորված ստորգետնյա եկեղեցները: Սյուրյանակ բագնացրդները, որոնք ունեին Անիի ամենատարողունակ ստորգետնյա եկեղեցին ու մի մասուն, կարող էին սահմանափակվել մեկ ծխով: Նոյնպիսի դրության մեջ էր և Սյուրյանի աջ ափի միայնակ ժայռափոր բաղը, որը քաղաքից դորս էր, Անիի վասկից ցածր: Դատերով բնակարանների բնակիցից, նրա բնակչությունը թվով մեծ չէր և կարող էր քաղաքարվել մեկ եկեղեցիով:

«Ստորգետնյա Անիում» տարբեր վիճակում մեզ են հասել 35 եկեղեցներ: Դրանցից մեկը տնային, մեկը վանքային, 7-ը դամբարաններին կից և 26-ը մեկական: Ենթադրում ենք, որ Անիի ծաղկման ժամանակաշրջանում, երբ անվթար էին ձորերի ժայռափորների բոլոր հարկաշարքերը,

ստորգետնյա եկեղեցիների թիվն էլ ավելի շատ էր:

* * *

Անիի ստորգետնյա եկեղեցիները մեծ չեն իրենց չափերով և ճարտարապետական հորինվածքներով մեծամասամբ պարզ են: Այսպես, դրանցից երկու ամենամեծերը՝ Բագրայի ձորում և Շաղկոցաձորում, Գագիկ Ա.-ի կառուցած եկեղեցու մոտ, չհաշված ավագ խորանները, ունեն ընդամենը 30 և 27 քմ մակերես: Իրենց ճարտարապետությամբ ոշագրավ անխորան եկեղեցիները՝ Տիգրան Հոնենցի դամբարանային համալիրում և Գալիձորում, ունեն 18-ական քմ մակերես:




1. Շաղկոցաձոր. Զախ ափ. եկեղեցի

Բոլոր ստորգետնյա եկեղեցիները, բացի երկուսից, բաղկացած են տարբեր երկարության ուղղանկյուն թաղածածկ հավից, որը հատկացվում էր աղոթողներին, և ավագ խորանից, որը հարում էր նաև արևելյան ծայրին:

Շաղկոցաձորի հիշատակված մեծ եկեղեցին կարող է այդ պարզագույն տիպի օրինակը հանդիսանալ: Արևմտյան կողմից եկեղեցու առաջ հայկինում եղել է նույնպես ստորգետնյա մաս (հայտադրություն) կամ

գալիք), ավերված ժայռի փողոքի ժամանակ: Հիմա եկեղեցին զրկված արևմտյան պատից, թողնում է խորքում արսիդով մեծ քարանձավի տպակորություն (Շ. 1), բացվելով ձորի կողմը գետից մոտակորպես 20 մ բարձրությամբ:

Համարյա բոլոր ստորգետնյա եկեղեցիներում ավագ խորանը ունի թաղակապ կիսաշրջան արսիդի տեսք: Միայն երեք եկեղեցիներում երանք ողղանկյուն են: Երկու



Նկար Շաղկոցաձոր Հայոց եկեղեցի

2. Քաղաքային եկեղեցի ժայռում (բայ Մ. Brossel -ի)

դեպքում ավագ խորանից բացի, կիսաշրջանաձև են նաև նայի արևմտյան ծայրամասերը: Ավագ խորնի մակերեսը մեծացնելու հապատակով, համարյա բոլոր դեպքերում երա կիսաշրջան պատը խորացված է այնպես, որ երա սկիզբը չի համբռնելում անկյունների մեջ (Շ. 1): Ավագ խորանի քեմքը, ինչպես ամենուրեք անում էին Բագրատունյաց շրջանի վերգետնյա եկեղեցիներում, զգալի չափով (մինչև 1 մ) բարձր է աղոթարանի հատակից: Մինչ այդ, ինչպես տեսնում ենք հօֆինորի եկեղեցի-դամբարաններում, ունի բարձրությունը մեծ չէ: Ավագ խորաններում հանդիպում ենք սեղանների՝ ուղղանկյուն վեմ քարի ձևով կերտված արսիդի խորքում միևնույն ժառնից (Շ. 10): Աղոթարանի հավաք երկար լինելու դեպքում, երա երկայնական պատերը մեշտեղում ունեն պիլյատրաձև եղուստներ, որոնք «կրում» էին կամ թաղակիր կամարները, կամ նույն թաղերի անկյունից անկյուն ձգված շլակամարները (Շ. 2): Ինքն ըստ ինքյան հաւաքանայի է, որ հիշատակված պիլյատրաձև եղուստներն ու կամարները ժայռափոր կառուցվածքներում չունեն որևէ կոնստրուկտիվ նշանակություն և հանդիսանում էին վերգետնյա ճարտարապետության ձևերի և կառուցվածքների լոկ դեկորատիվ հմանակումը:

Մի քանի եկեղեցիների հարդարման մեջ օգտագործված են կիսապունիք՝ տեղադրված արսիդի և նաև անկողններում, ինչպես նաև տարբեր համակցությամբ (զոյակամ փեշաձև) փոխարինող եղուսներ երկայնական պատերի վրա: Նման հարդարում մենք երկու իրենց հարտարապետության նորինվածքով միմյանց շատ նման եկեղեցիները: Դրանցից մեկը գտնվում է:




3. Գայլինոր. Եկեղեցի

Ծաղկոցանորի վերին հուսանքում, որա ձախ ափի ժայռերի մեջ: Մյուսը՝ պատես կոչված «կարմիր» եկեղեցին է (նկ. 11) քաղաքամիջում, «Պարոնի պալատ»-ի մոտ: Վերջինս միայն պայմանականորեն կարելի է կոչել ստործությա, որովհետև այն փորված է գետնի վրա ու քաղաքի կոսուց վաճրեների միջև գտնվող մի կարմրագույն ժայռագագամի մեջ (նկ. 2): Զգված հավաղործարաններ ունեցող երկու եկեղեցիներում է երկայնական պատերի նկատմամբ դուրս են շեշտված սյունափառքներ, որոնք «պատում են» թաղակիր կամարը և ջլակամարները: Ավագ խորանների արսիդների անկողններին նույնպես տրված են սյուների ձև: Գայլինորի եկեղեցում, որը պատկանում է ստորթարանի արնելյան և արևմտյան կողմերից կիսաշրջան արսիդ ունեցողների թվին, կիսապունիքներն ստա-

ցել են այլ՝ դեկորատիվ նշանակություն (նկ. 3): Այստեղ ավագ խորանի կիսաշրջանը քածանված է վեց մասի և հարդարված է որմնակամարներով միացված գոյզ կիսապունիքի միջոցով: Սրանում կարելի է նկատել Անիի Կարտողիկելի և Մարմաշելի 1029 թ. եկեղեցու արսիդների հարդարման պարզեցված կրկնությունը:

Ծաղկոցանորի վերին հուսանքում, նորից ձախ ափին, հայտնաբերված է շատ հետաքրքրի մի այլ՝ քաղկացած թաղակապ երեք նամակերից: Ցավոր, ոս այնքան ավերված է և լցված քարաքեկորներով ու նողմանաբարված ապարով, որ չհաջողվեց չափագրել և պարզել, թե ի՞նչ է այստեղ եղել, եռանալ բազիլիկ, թե՝ երեք ինքնուրույն եկեղեցիներ, քանի որ յուրաքանչյուր նաև արևելյան կողմից ավարտվում է արսիդով: Այրի արևմտյան հակատային պատը քայլաված է մինչև հիմքը և այդ պատճառով հայտնի չէ մուտքերի թիվը՝ եղել է մեկ, թե՝ երեք:




4. Ծաղկոցանոր. Գերեզմանոց. գմբեթավոր եկեղեցի

Այս եռանալ այրում հարտարապետական լուծման հիմնական սկզբունքը երկու դեպքում էլ նոյնն է, ինչ Անիի ստորգետնա քաղանասերի բոլոր միանալ եկեղեցիներում: Խոկ Ծաղկոցանորի աջ ափին, Պագիկ Ա.-ի տաճարի դիմաց, Տիգրան Հոնենցի արդեն հիշատակված դամբարանային մեծ համալիրում, պահպանվել է գրմբեթավոր մի եկեղեցի՝ ստորգետնա քայլարի միակ մատչելի ավերակը (նկ. 4):

Հատակածի հիմքը այստեղ հանդիսանում է գմբեթատակ քառանկյունին, որը մոտ է քառակուսուն: Արևելյան կողմից հրան հարում են ավագ խորանի շատ խոր արսիդը և մնացած երեք կողմերից՝ հարթ խորշեր: Արևմտյան կողմից հիշյալ խորշերի անկողնները կտրված են 45° անկյան տակ: Խորշերի լայն կամարների և ավագ խորանի կամարի միջն, անկյուններում, ժայ-


ոյ վրա վարպետորեն փորված են առաքաստներ: Սրանց վերնամասը եզերված է քիվով, որը կազմում է պասկող գմբեթի ոչ բարձր թմբովի օղակաձև «հիմքը»: Այս եկեղեցու ընդհանուր կառուցվածքը մոտեցնում է նրան խաչաձև գմբեթավոր փոքր եկեղեցիներին:



5. Ծաղկոցանոր. Քարափ վաճքով. ընդհանուր տեսք

Ծաղկոցանորի աջ ափի, Խգիձորից մինչև Ախուրյան ընկած տեղամասի եկեղեցները, ըստ երևույթին, չի կարելի համարել ծխական, քանի որ դրանք այստեղ կազմում էին բաղկացուցիչ մասը տարրեր նշա-

Այդ բարդ այրը գտնվում է Անիի միջնաբերդի դիմացը և երկու խորը ձորակների միջև ընկած մի սրածայր քարափի մեջ (նկ. 5): Քարափն ամբողջ բարձրությամբ կտրտված է իրենց հատակագծով Անիի ստորգետնյա սովորական բնակարաններից էապես տարրերվող այրերի հարկաշարքերով: Այրը, որի մասին խոսում ենք, գրադեցնում է վերին բարձրաշարքի զգալի մասը: Այժմ դրան կարելի է հասնել ոչ առանց դժվարության, այրերի ներքին բարկաշարքերի միջոցով: Անցնելով ստորգետնյա միջանցքով, ընկնում ենք ոչ մեծ ($2,5 \times 2,45$ մ, բարձրությամբ $2,35$ մ) քսակուսի մի սենյակ: Հնում այստեղ կարելի էր մտնել նաև այրի ճակատային պատի ողողությամբ ձգված ժայռապատճեն բաց սրահից սկսվող մուտքով: Այժմ այդ սրահը փլավ է և դուռը բացվում է ուղղակի դեպի ձորը: Ներքին դռան աջ և ձախ կողմերում կան և երեք դռներ, որոնք տանում են դեպի փոքր սենյակները (դրանցից փոքրագույնը ընդամենը $2,2$ քմ մակերես ունի): Աջ պատում դուռ է, որը տանում է երկրորդ, նոյնական բավականին ընդարձակ, համարյա բոլորովին ավելի ված թաղական սենյակ: Դրանցից կարելի է անցնել դեպի պարզագույն տիպի մի եկեղեցի և այնուհետև՝ մի կարճ միջանցքով դեպի թաղա-



6. Ծաղկոցանոր. Վաճքի գլխավոր հատակագիծը. ա. սեղանատուն, բ. գավիթ, գ. եկեղեցի, դ. խուցեր

նակության ժայռափոր կառուցվածքների և նոյնիսկ անմիջականորեն չէին հաղորդակցվում արտաքին աշխարհի մեջ: Վերին հարկաշարքերը գրադեցնող այդ կառուցվածքները պատկանում էին նշանավոր քաղաքացիների, իսկ մի դեպքում էլ՝ փոքր վաճքի: Դրանցից էլ սկսնք մեր պատմությունը:

Կապ սենյակը՝ պատկերու տեղով երկարավուն խորշի մեջ, որը գտնվում է սանդուղքից բացվող մուտքի աջ կողմուն: Աղբեմ այրի այս մասի մեջ ծանոթացնում բացառում է տարակուսաներն այն բանում, որ այստեղ սակետիկ կյանքով աղբեկիս է եղել միաբան եղբայրների փոքրաթիվ մի խումբ: Դրա մասին են վկայում սենյակների ողջ

կազմը—եկեղեցին գավթով, սեղանատունը և խցերը, որոնցից առաջինը, որ գալիք միջոցով անմիջականորեն կապված էր եկեղեցու հետ, ամենայն հավանականությամբ պատկանում էր վանահայրին կամ քահանային: Սեղանատունից ձախ, մեկը մյուսի հետևում գտնվում էին ևս երկու սեղակներ: Առաջինին կից թվով չորրորդ փոքրաշահի խոցին էր վերի կիսահարկով: Երկրորդ շատ ցածր (բարձր. 1,5) խոցում, երկու պատերին կից սարքավորված են պատկելատեղերը:



7. Ծաղկոցաձոր. Աջ ափ. անֆիլադ՝ բաղկացած ժամատնից, տնային եկեղեցուց և խորանից


Բոլոր սեղակների խատությունը (բացի սեղանատնից և գավթից) ընդգծում են իրենց ոչ մեծ բարձրությունը— ընդամենը 1,7 մ: Հիշյալ սեղակների շարքը ավարտում է փոքր կիսավեր աղավնատունը: Միաբանության մի մասը կարող էր ապրել ներքին հարկաշարքի այբերում, որտեղ ըստ երեսույթին կային նաև տնտեսական սեղակներ, ինչի մասին վկայում են այնուել գրտերվող շրջանաձև եզակի աղավնատունը 6—7 հարյուր թոշումի համար:

Վերջին հարկաշարքում, վանքային մեծ այլից աչ, բարափի ծայրին, ոչ մեծ դամբարաններին կից, պահպանվել են երկու փոքր եկեղեցներ: Դրանցից մեկը սովորական տիպի է, իսկ մյուսը, բացի ավագ խորանի արքիդից, ունի երկրորդ կիսաշրջան խորանը նաև արևմտյան ծայրում:

Բագնայիրի կիրճի ելքի մոտ, հրա ձախ ափին, որտեղ հրա և Ծաղկոցաձորի ծայրակցատեղում մի անկյունավոր ժայռագանգված է կազմված, դրա վերնամասում տեղավորված են անհայտ հարուստ անեցու պատկանող մերձքաղաքային դաստակերտի («հովանոցի») ընդարձակ դահլիճները: Վերջիններս տեղակորված են ձորերի երկարությամբ մեկ շարքով: Բագնայիրի կողմից վրա եղել են երկու դահլիճն և չպահպանված նախարարի, հավանաբար դռնապահի սեղակուլ: Դահլիճների հետևում, ժայռի խոր-

բում, փորբած էր մի մեծ ($9,2 \times 9,3$ մ) սեղանատուն: Ծաղկոցաձորի սահում գտնվում էին երկու ժայռափոր դահլիճներ, ինչ բագնայիրի կիրճի պատույտի մոտ՝ տնային եկեղեցի՝ անֆիլադային կարգով դասավորված խորանով և գավթով (նկ. 7):

Սովորական տիպի ոչ մեծ եկեղեցին և հրա հարակից փոքր խորանը ոչնչով չեն առանձնանում Անիի ատորգետնուան եկեղեցիներից: Իսկ գավիթը, որ հարուստ է եկե-



8. Ծաղկոցաձոր. Գավիթ՝ տնային եկեղեցուն կից

դեցուն հյուսիսից, պիտի դասվի մայրաքաղաքի ատորգետնուան դիտարժան կառուցվածքների շարքը: Այն ներկայացնում է հզոր մույթերով երկու մասի բաժանված մի սրան, մույթերը կրում են ժայռափոր թաղերի մի բարդ համակցություն (նկ. 8): Հնում սրանի ափին ողηյահայց նավերը լուսավորվում էին դեպի քաղաք հայող պատուհաններով: Հայաստանի վերգետնուան ճարտարապետության մեջ գոյնություն ունեցող եկեղեցներին կից գավիթների շինարարությունը լայն տարածում ատացավ Զաքարյանների ժամանակ: Ստորգետնուան պայմաններում հնտևուել ապդ օրինակին հնարավոր չէր, որովհետև եկեղեցների առջևում չկային բավականաչափ հարթակներ, իսկ կողքից հրանք «կառուցապատված» էին այդպին բնակարանով: Այդ պատճառով էլ ատորգետնուան գավիթներն այսուել հնագոտեակ են: Դրանք բոլորը «կառուցված են» եկեղեցների հետ միաժամանակ և ներկայացնում են պարզ քառանկյունի մի սենյակ: Գալիձորի հիշատակված եկեղեցուն կից գավիթը կամարներով բաժանված է երկու անհավասար մասերի: Կամարները պատերից ձգված են մեջտեղում կանգնած սյան վրա: Ուշագրավ է վերջինիս խոյակը, որը նմանակում է Գագկաշենի խոյակին:

«Հովանոցի» տեղամասից հետո, Ծաղկոցաձորի աչ ափը զգալի երկարությամբ զբաղեցված է ատորգետնուան մի ընդարձակ գերեզմանոցով՝ ատորգետնուան միայնակ

գմբեթատիոր եկեղեցիով հանդերձ: Սրա մեջ մտնում են տեսքով բազմազան մի շարք սենյակներ՝ գերեզմաններով: Ժայռի ճակատային մասը հանարյա անդրոշ երկարությամբ փլվել է և այդ սենյակների ներս լավ տեսանելի է ձորից ու քաղաքաներից: Գերեզմանոցի սկզբանապ ներկայացնում էր մի սրան կամ միջանցք, որի մի պատի մեջ փորված է բարձր և խորը խորշերի շարք, իր ժամանակ քարե կափարիչներով ծածկող արկղան սարկոֆագներով ներքնամասում: Սուաշին խորշը, որում Ն. Մատիկարծիքով թաղված էր 1215 թ. Անհի լավագույն նկեղեցիներից մեկը կառուցած



9. Ծաղկոցաձոր. Ժայռափակոր գերեզմանոց. խորշ
Տիգրան Հոնենցի գերեզմանով

Տիգրան Հոնենցը, ամբողջությամբ ծածկված է մեր ժամանակներում վաստ պահպանված որմնանկարներով: Սրանց մասին գաղափար է տալիս լուսանկարը (Ակ. 9), որը վերարտադրում է հավանաբար Անհի արշավախմբում աշխատող Ակարիչներից մեկի գունավոր նկարը (Ակարչի ազգանունը պարզել չհաջողվեց): Խորքում, հետին պատի վրա, պատկերված է Դեմիտրոսը՝ Քրիստոսը հատած գահին, երկու կողմերում ունենալով Աստվածածինը և Մկրտիչը: Թաղի վրա Միքայել (աջից) և Գաբրիել (ձախից) հրեշտակներն են թաղի գագաթին միմյանց մոտեցող գլուխներով: Դեմիտրոսից աջ հայերեն արձանագրություն է՝ բաղկացած 16 տողից (ձախ սյունակում

բերված է Դ. Ղիփշիձեի դաշտավին գրառումը, աջում՝ տողեր, որոնք տարբեր են խորշի նկարից վերցրած այդ գրառումից): Համապատասխան արձանագրություն ունենան հրեշտակների պատկերները: Որմնանկարների հետքեր նկատելի են միջանցքի պատին և հաջորդ խորշի մեջ:

Պատովելով դեսի ձախ, միջանցքը բերում է համապատակ՝ ընկած հատակին գերեզմաններու երկու ոչ մեծ սենյակների առջև: Այնուհետև նեղավորված են թաղման բնույթով իրարից տարբեր երկու մեծ դամբարձությունը: Առաջինը, ըստ ճակատի 12,75 մ երկարությամբ, երեք պահպանված պատերի մեջ ունի 6 խորշեր, որոնցից երկուսը խորոշությամբ ամերան մեծ են, որ տեղավորում են մի քանի թաղում: Երկրորդ դամբարձությունը տեղավորված փոքր-ինչ ցածր (չափերը $11,40 \times 4,95 \times 2,90$ մ), ամբողջությամբ զարդեցված է հատակին փորված հինգ շարք գերեզմաններով: Չորս շարքում զետեղված է 8-ական, իսկ հինգերորդում՝ յոթ գերեզման: Գերեզմանոցի սենյակաշարքը նրա հարավային մասում ավարտվում է մեզ արդեն ծանոթ գմբեթավոր եկեղեցով (Ակ. 4):

Անհի հնագիտական արշավախմբի տարիներին Ն. Մատիկարծին, Թորամանյանի, իրենց մասնակիցների և օգնականների աշխատությամբ հինգ էր դրվում Հայատանի հնությունների սիստեմատիկ ուսումնասիրության: Այն ժամանակ դեռևս հայտնի կամ ուսումնասիրված չէին շատ հուշարձաններ, այդ պատճառով այժմ, ավելի քան կես դար անց, երբ կուտակված է հնագիտական հյութ, երբեմն կարիք է լինում վերանայել հաստատված կարծիքները: Այդպես պատճեց Անհի երկու փոքր ստորգետնյա եկեղեցիների հետ²:


Այդ եկեղեցիները գտնվում են Խգիձորի վերին հոսանքում, Խգիձորյան դարպաններից: Ծաղկոցաձոր իշխող ճանապարհից աջ: Նրանք փորված են վերին կարծր ծայռաշերտում, իրար կողքի, միմյանցից 20 մ հեռավորությամբ հյուսիսից հարավ: Ժայռն այստեղ ունի դեպի արևմուտք ուղղված եղուսա 3,35 մ բարձրությամբ, որի ուղղաձիգ հարթությունը՝ եկեղեցիներից յուրաքանչյուրի համար ծառայում է ճարտարապետորեն մշակված մուտք պարունակող արևմտյան ճակատ:

Հ. Ա. Օրբելին, հիշատակելով դրանք «Կրակի» путеводитель по городищу

² H. M. Tokarskiy, Из истории пещерного строительства в Ани. «Պատմա-քանակահական հանդիս», № 1(82), 1968:

Ահա»-ում (Անվո շարք, № 4, ս. Պետերբուրգ, 1910), հատկապես նշում է. «Եկեղեցիներում հետաքրքիր են ժայռի մեջ փորված մկրտության ավազանները՝ հաշված տարիքով մարդու համար»: Հինգ տարի անց նույնը իր գրառումներում կրկնում է Դ. Ղիփշիձեն:


Այդ երկու եկեղեցիները ճարտարապետությամբ և նույնին չափերով այնքան նման են, որ կարելի է սահմանափակվել ծանրթանալով միայն մեկին՝ հյուսիսայինին, որպես տիպի առանձնահատկությունները առավել լիիվ բացահայտողի:



10. Խգիձոր. Հյուսիսային եկեղեցի-դամբարանը

Եկեղեցու հիմքը հանդիսանում է հատակածում քառակուսի քաղակապ ոչ մեծ ($2,55 \times 2,4$ մ, բարձր՝ $2,8$ մ) մի տարածություն: Արևելքից նրան հարում է խորը պասիդ, իսկ հյուսիսից և հարավից՝ ուղղանկյուն քաղակապ ընդարձակ խորչեր (նկ. 10): Խորչերի ներքնանասում, ժայռի մեջ, փորված են քարարկեր՝ իրենց չափերով միանգամայն քավական տարեց մարդուն պատկան մեջ տեղակուրելու համար: Անտարակույս արկեները ծածկվում են քարե սալերով, քանի որ նկարի վրա պարզորոշ երևում է երկայնական պատի վրայի եղուստը՝ նրանց ծայրերը պահելու համար: Առաջամասի պատերը, որուց վրա հենվում են սալերը, քանի որ ծայրանուն պահանձնական միանգամայն քարարկերը, պահպանվել են միայն հիմքում: Այս քարարկեները սկալմամբ ընդունվել են մկրտելու ավազանի տեղ: Դրանց, ինչպես և այրերի իսկական նշանակությունը այլ էր: Այն անհանակ կերպով պարզվում է, երբ Խգիձորի այրերը համեմատում ենք Արագածի հարավ-արևմտյան փեշերին գտնվող Աղյուղի կիսաստրոգետնյա դամբարանի հետ: Հայաստանի քրիստոնեական ճարտարապետության այդ հնագույն հուշարձանի գծագրերը Աշխարհին դաշտվության մեջ պահպանվել են մասնաւոր կերպով:

Քալանթարի չափագրությամբ 1925 թ. կատարված են իմ կողմից, առաջին անգամ ցուցադրված են Լենինգրադում ունեցած իր գիտական գեկուցումների ժամանակ և հետագայում հրապարակված են մի շարք աշխատություններում (նկ. 11): Աղյօ դամ-



11. Աղյօ դամբարան

բարանի ճարտարապետական հորինվածքը և Խգիձորի եկեղեցիները նույնն են: Մասնակի որոշ տարրերությունները առաջացել են այն տեղադրական պայմաններից, որոնցում գտնվում են այս հուշարձանները: Աղյօ դամբարանը կառուցված է թեք սարալանչի վրա, և շինարարները ստիպված են եղել դրույուր դեպի մուտքը իշխող սանդողքներով հանդերձ տեղավորել արևմուտքից: Աղյօ դամբարանի հատկացնությունների մասին նշանակած առաջանակը չի կարող կակած առաջանակ, որովհետև Սովում խորին հայտնացին իր «Պատմության» մեջ հայտնում է, որ նենց պատեղ է կատարվել թաղումը հայ թագավորների անցրների՝ պարսիկների կողմից դրանց հայ նախարարներին հանձնելուց հետո: Այդ իրադարձությունները տեղի են ունեցել 4-րդ դարի երկրորդ կեսին, որպիսի ժամանակին պիտի վերագրվի նաև Աղյօ դամբարանը: Աղյօինի թվագրում հաստատում է նաև դամբարանի մի տիպ՝ տարածված 4—5-րդ դդ. Սիրիայում, որ տեղից կարող էր այն փոխանվել քրիստոնեության հաստատումից հետո: Պետք է հշել, որ սիրիական դամբարանները չունեն արսիդներ, դրա փոխարեն կար երրորդ խորշը սարկոֆագով: Ընդունելով ընդհանուր սխեման, հայերը մոտցել են խորան՝ դարձնելով սիրիական դամբարանը հայկական դամբարան-եկեղեցի: Այդ տիպին պիտի դասվեն Խգիձորի այրային եկեղեցիները: Կան բոլոր հիմքերը դրանք 4—5-րդ դդ. վերագրելու և համարելու Անիի (երբ այն դեռ ամրոց էր) հնագույն եկեղեցիները: Առաջին հայացքից կարող է թվականը որ այսպիսի թվագրությունը հերքվում է հարավային եկեղեցու ճարտարապետական համարելու մոտ և 740—1291 թիվն ունեցող արձանագրությունը: Սակայն դատելով

նրանում «ախելքալաք» խոսքի առկայությունից, այսուղի խոսքը այլ եկեղեցու մասսին է, որի կառուցման ավարտումը արձանագրության մեջ նիշատակած ամուսիները ցանկացել են հավերժացնել ժայռի վրա, հավանաբար նրանց սեփականությունը կազմող հին կառուցվածքի մոտ: «Ախելքալաք» վրացերեն «ախալքալաք» աղավաղված խոսքը չի կարելի թարգմանել «Նոր քաղաք», որովհետև եկեղեցու տեղադրության նշումը հայերեն արձանագրության մեջ կլիներ հայերեն խոսքերով: Դա աշխարհագրական անոն է, հավանաբար հարևան Վրաստածի Զավախքի համագի մի բնակավայրի, որը գոյություն ուներ արդեն 10-րդ դարում: Հիշեցնենք, որ Խօհձորի

եկեղեցի-դամբարանները գտնվում էին քաղաքային պարիսպներից դուրս:

Վերջում անհրաժեշտ է մի քանի խոսք ասել ստորգետներս կառուցողների աշխատանքի որակի մասին: Եկեղեցիների մեծ մասը քանդակված է ժայռերի մեջ մեծ վարպետությամբ: Խևամբով տաշված են ամելյունները, պյուիկները, պատերի և թաղերի մակերևույթները, որոնք գործիքից հետո մեծամասամբ տառացիորեն հոլիված են, հավանաբար բազալտե հղկիչով: Զափազանց նրբորեն են փորագրված արսիդների ձևավոր թաղիկներով պակլված խրշիկները՝ եկեղեցական տարրեր սպասների համար:

